ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

ք.Երևան «21» հունվարի 2019թ.

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Ս. Պապիկյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Դրամաշնորհ տրամադրող)՝ մի կողմից և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ ի դեմս կազմակերպության տնօրեն Ա. Վիրաբյանի, որը գործում է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Դրամաշնորհ ստացող)՝ մյուս կողմից հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 08 բաժնի, 02 խմբի, 04 դասի, 1147 ծրագրի, 11001՝ «Արխիվային ծառայություններ» միջոցառման (այսուհետ՝ Ծրագիր) համար Դրամաշնորհ տրամադրողին հատկացված 591,622.1 հազար դրամ (հինգ հարյուր իննսունմեկ միլիոն վեց հարյուր քսաներկու հազար հարյուր) դրամաշնորհի գումարը, որը տրամադրվող դրամաշնորհի առավելագույն չափն է և իր մեջ ներառում է նաև ԱԱՀ-ը: Դրամաշնորհ տրամադրողը Դրամաշնորհ ստացողին է տրամադրում ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային (աճողական) բաշխվածությանը համապատասխան՝ ամսական համամասնություններով՝ իր կանոնադրությամբ սահմանված գործառույթները իրականացնելու նպատակով:

1.2. Ծրագրով նախատեսված Դրամաշնորհ ստացողի կանոնադրական նպատակներին ուղղված իրականացվելիք միջոցառումները և արդյունքի չափորոշիչները ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Դրամաշնորհի տրամադրման և ծախսման կարգը

2.1. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված դրամաշնորհի գումարն անհրաժեշտ է ծախսել Ծրագրի նպատակներին համապատասխան:

2.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված դրամաշնորհի գումարը, կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում՝ կատարվում է ոչ նպատակային օգտագործված գումարի հետգանձում:

2.3. Դրամաշնորհ ստացողը պետք է սույն պայմանագրի 1.1. կետում նշված միջոցների ստացման և ծախսման հաշվապահական փաստաթղթերը կազմի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

2.4. Սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո Դրամաշնորհ տրամադրողը սույն պայմանագրի 1.1. կետում նշված դրամաշնորհի գումարը Դրամաշնորհ ստացողին տրամադրվում է անկանխիկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչությունում բացված գանձապետական հաշվին փոխանցվելու միջոցով:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

ա) Կողմերի իրավունքները.

3.1. Դրամաշնորհ տրամադրողն իրավունք ունի.

3.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել դրամաշնորհ ստացողի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը՝ առանց միջամտելու նրանց բնականոն գործունեությանը, պահանջել տեղեկատվություն կատարվող աշխատանքների բնութագրերի վերաբերյալ:

3.1.2. Իր հայեցողությամբ սահմանել բացահայտված թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ:

3.1.3. Վերահսկել Դրամաշնորհ ստացողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

3.1.4. Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

3.2. Դրամաշնորհ ստացողն իրավունք ունի.

3.2.1.Տեղեկացնել դրամաշնորհ տրամադրողին սույն պայմանագրով նախատեսված գործունեության ընթացքում տեղ գտած թերությունների վերաբերյալ:

բ) Կողմերի պարտականությունները.

3.3. Դրամաշնորհ տրամադրողը պարտավոր է.

3.3.1. Իրականացվող միջոցառումների դիմաց Դրամաշնորհ ստացողին տրամադրվող դրամաշնորհի գումարը վճարել անկանխիկ, յուրաքանչյուր ամիս՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային բաշխվածությանը համապատասխան՝ ամսական համամասնություններով:

3.4. Դրամաշնորհ ստացողը պարտավոր է.

3.4.1. Կանոնադրությամբ սահմանված գործունեությունն իրականացնել սահմանված կարգերին և ստանդարտներին համապատասխան:

3.4.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Դրամաշնորհ տրամադրողին ներկայացնել սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված ոչ ֆինանսական ցուցանիշների (քանակական և որոկական), ինչպես նաև ֆինանսական գործունեության եռամսյակային, տարեկան հաշվետվություններ:

3.4.3. Դրամաշնորհ ստացողը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2019թ. թվականի դեկտեմբերի 25-ը:

3.4.4. Դրամաշնորհ ստացողը մինչև 2020թ. հունվարի 31-ը սահմանված կարգով Դրամաշնորհ տրամադրողին է ներկայացնուն տեղեկատվություն պայմանագրի շրջանակներում հաշվարկված և պետական բյուջե վճարված ԱԱՀ գումարների, ինչպես նաև ծրագրի իրականացման արդյունքներով չօգտագործված և պետական բյուջե վերադարձված գումարների մասին:

4. Պայմանագրային պարտավորությունների հանձնման ընդունման կարգը

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումները պետք է ավարտվեն, 2019 թվականի դեկտեմբերի 25-ը: Դրամաշնորհ ստացողը սույն պայմանագրի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում Դրամաշնորհ տրամադրողին է հանձնում սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելված 1-ի ցուցանիշներին համապատասխան իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի երկու օրինակ:

4.2. Դրամաշնորհ տրամադրողը Դրամաշնորհ ստացողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը կամ չընդունելու պատճառաբանված մերժումը:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)

5.1. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պարտավորություններից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ իրավիճակները,

քաղաքական հուզումները: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Այլ պայմաններ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

6.2. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.3. Պայմանագրի փոփոխությունը կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր, կողմերի գրավոր համաձայնությամբ:

6.4. Սույն պայմանագրով կողմերը իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերացումները և ստորագրությունները

Դրամաշնորհի տրամադրող
ՀՀ տարածքային կառավարման
և զարգացման նախարարություն

Հասցեն՝ ք.Երևան, Հանրապետության
հրապարակ, Կառավարական 3 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011003184
ՀՎՀՀ 02578338
ՀՀ տարածքային կառավարման
և զարգացման նախարար

_____Ս. Պապիկյան

Դրամաշնորհի ստացող
«Հայաստանի ազգային արխիվ»
պետական ոչ առևտրային
կազմակերպություն
Հասցե՝ ք.Երևան, Հր.Քոչարի 5/2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018002080
ՀՎՀՀ 00078217
«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ
տնօրեն

_____Ա. Վիրաբյան

Հավելված 1
«21» 01 2019թ.
Դրամաշնորհի տրամադրման
1 պայմանագրի

Դրամաշնորհի տրամադրման պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայություններ

Պամանագրի անվանումը՝ Դրամաշնորհի տրամադրման պայմանագիր

Պամանագրի համարը՝ 1

Կնքման ամսաթիվը՝ «21» 01 2019թ.

Միջոցառման անվանումը	Արխիվային ծառայություններ
Նկարագրությունը	ՀՀ արխիվային հավաքածուի պահպանություն, համալրում, հաշվառում, հանրության կողմից արխիվային նյութերի օգտագործման ապահովում

Արդյունքի չափորոշիչներ	Հաստատված
Արխիվային հավաքածուի, պահպանվող գործերի քանակ, գործ	4310000
Վերականգնվող արխիվային փաստաթղթերի քանակ	325000
Ախտահանվող արխիվային գործերի քանակ, գործ	4400
Կազմապատվող արխիվային գործերի քանակ, գործ	2100
Արխիվային հավաքածուի օգտագործում, ֆիզիկական և իրավաբանական անձանց հարցումների քանակը, հատ	35000
Արխիվային նյութերն օգտագործողների քանակ, հատ	475
Ռադիոհեռուստատեսային հաղորդումների պատրաստում՝ քանակ	30
Հոդվածների պատրաստումը և հրատարակում, հոդվածների քանակ, հատ	15
Կազմակերպվող ցուցահանդեսների քանակ, հատ	5
Փաստաթղթերի գիտատեխնիկական մշակում, հատ	150000
Ֆիլմերի թվայնացում, պահպանման միավոր	250
Փաստաթղթերի թվայնացում, թերթերի քանակ, էջ	155000
ՀՀ արխիվային հավաքածուի փաստաթղթերի թվայնացման աշխատանքների իրականացում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ (%)	0.05
Տեղեկությունների էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքների իրականացում, քարտերի քանակ	120000
Տեղեկությունների էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքների իրականացում, նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ (%)	0.05
Մեկ արխիվային միավորի էվայնացման միջին տևողություն/ մուտքագրում և սպասարկում/ (առավելագույնը րոպե)	15
Միջոցառումների վրա կատարվող ծախսերը (հազար դրամ)	591622.1

Դրամաշնորհի տրամադրող
ՀՀ տարածքային կառավարման
և զարգացման նախարարություն

Հասցեն՝ ք.Երևան, Հանրապետության
հրապարակ, Կառավարական 3 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011003184
ՀԿՀՀ 02578338
ՀՀ տարածքային կառավարման
և զարգացման նախարար

_____Ս. Պապիկյան

Դրամաշնորհի ստացող
«Հայաստանի ազգային արխիվ»
պետական ոչ առևտրային
կազմակերպություն
Հասցե՝ ք.Երևան, Հր.Քոչարի 5/2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018002080
ՀԿՀՀ 00078217
«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ
տնօրեն

_____Ա. Վիրաբյան